ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 77 - Ա **05 մայիսի 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2017 թվականի հունվարի 13-ի N 1-Ա որոշման հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 5.1.1 կետը

որոշում եմ՝

1. 2017 թվականի մայիսի 24-ին՝ իմ ղեկավարությամբ, անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման դեպքում» թեմայով:

2. Հաստատել՝

1) հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հրամանատարաշտաբային ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) հրամանատարաշտաբային ուսումնավարժության մտահղացման բացատրագիրը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) հրամանատարաշտաբային ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) հրամանատարաշտաբային ուսումնավարժության իրավիճակի զարգացման պլանը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) հրամանատարաշտաբային ուսումնավարժության գործնական միջոցառումների անցկացման պլանը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման կազմակերպման սխեման՝ համաձայն N 7 հավելվածի:

3. ՈՒսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմին.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակների մշտական հանձնաժողովին.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովին.

4) «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերությանը.

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք համայնքի ղեկավար կազմին.

6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքի ղեկավար կազմին.

7) Գավառի աղետների բժշկության թիմին.

8) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնի խմբին.

9) Գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկրամատակարարման համակարգերի վթարավերականգնողական մեկական խմբերի:

4. Հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Էդիկ Գալստյանին՝

1) կազմակերպել հրամանատարաշտաբային ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

2) համապատասխան մասով ճշգրտել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլան»-ը.

3) հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել ինձ մինչև 2017 թվականի մայիսի 22-ը.

4) հրամանատարաշտաբային ուսումնավարժության անցկացումից հետո, 5-օրյա ժամկետում, ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

5. Հրամանատարաշտաբային ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան իրավիճակներում գործելու պլանները.

2) հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը նախապատրաստվելու հարցերով սերտորեն համագործակցել հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

3) գործնական միջոցառումների կատարման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները.

4) պատրաստ լինել զեկուցելու հրամանատարաշտաբային ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017թ. մայիսի 5-ի
N 77-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

ՀՀ	Պաշտոնը ղեկավարման շտաբում	փ/ծ կոչում Անուն Ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	փ/ծ գնդապետ Է. Գալստյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ
2	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետի տեղակալ	փ/ծ փոխգնդապետ Հ.Աբրահամյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, ՃԿԿ պետ
	Խաղարկման խումբ		
3	Խմբի պետ	փ/ծ մայոր Վ. Գորոյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
4	Խմբի անդամ	փ/ծ կապիտան Ա. Պետրոսյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ՕՀՀ ավագ հրահանգիչ
5	Խմբի անդամ	փ/ծ ավագ լեյտենանտ Գ. Միրիբյան	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ
	Վերլուծման խումբ.		
6	Խմբի պետ	փ/ծ մայոր Դ. Մանուկյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
7	Խմբի անդամ	փ/ծ կապիտան Ա. Սիմոնյան	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ
	Գործնական միջոցառումների կազմակերպման խումբ		
	Խմբի պետ	փ/ծ փոխգնդապետ Գ. Հակոբյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ ԲՊԲ պետ
	Խմբի անդամ	փ/ծ մայոր Ա. Բարսեղյան	Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 32 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար

	Խմբի անդամ	Հ. Բիձյան	Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների բաժնի վարիչ
	Խմբի անդամ	Վ. Խաչատրյան	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ
	Միջոցառումների մեկնաբանող	փ/ծ մայոր Ա. Առաքելյան	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ՕՀՀ ավագ հրահանգիչ
	Նմանակողների խմբի ղեկավար	փ/ծ մայոր Ա. Խաչատրյան	Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 32 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017թ. մայիսի 5-ի
N 77-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

ՀՀ	Ուսումնավարժությանն ընդգրկված մասնակիցները	միջնորդներ	
		պաշտոնը	Ազգանուն անուն
1	Մարզային տարահանման հանձնաժողով	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի պետ վարչության պետի տեղակալ	Գ. Հակոբյան
2	ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն, «ԱրմենՏել» ՓԲԸ Գավառի ՀՏԿ, «ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղ	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ	Վ. Գորոյան
3	Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչություն, տրանսպորտի բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ	Դ. Մանուկյան
4	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, հասարակության հետ կապերի բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ	Ա. Սիմոնյան
5	Մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏՍ վարչություն, բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ	Ա. Պետրոսյան
6	Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման, գյուղատնտեսության և բնապահպանության վարչություններ,	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ	Գ. Միրիբյան
7	Գեղարքունիք, Գանձակ համայնքներ, «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերություն	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ	Հ. Հակոբյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017թ. մայիսի 5-ի
N 77-Ա որոշման

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԾՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման դեպքում »

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

1. Կատարելագործել մասնակիցների գործնական ունակությունները ստեղծված իրավիճակում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:
2. Կատարելագործել փոխհամագործակցությունը կառավարման մարմինների միջև:
3. Ստուգել «ՀՀ Գեղարքունիքի մարզի ԱԻ-ում բնակչության պաշտպանության պլան»-ի իրատեսությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆԸ ԸՆԴԳՐԿՎՈՒՄ ԵՆ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմը, ՀՀ Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակների մշտական հանձնաժողովը, ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը, «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերությունը, Գեղարքունիք համայնքի ղեկավար կազմը. Գանձակ համայնքի ղեկավար կազմը, Գավառի աղետների բժշկության թիմը, ՀՀ ոստիկանության Գավառի բաժնի խումբը, գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկրամատակարարման համակարգերի վթարավերականգնողական մեկական խմբեր:

<u>ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ</u> 2017թ. մայիսի 24-ին ժամը 8^{00}-18^{00}

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Գեղարքունիքի մարզպետարանի խորհրդակցությունների դահլիճ, գործնական միջոցառումների անցկացման տեղամաս

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

«Գեղարքունիք 1» ջրամբարը գտնվում է Գեղարքունիք համայնքից մոտ 2կմ դեպի հարավ-արևմուտք: Ջրամբարը կառուցվել է 1936թ., վերանորոգվել է 1981-1985թթ և 1986թ հանձնվել շահագործման: բարձրությունը ծովի մակարդակից կազմում է մոտ 2500մ, տարողությունը 325000մ^3, առավելագույն խորությունը 15մ, հայելու մակերեսը 5,8 հա, պատվարի

երկարությունը 291մ, բարձրությունը 15մ: Ջրամբարի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն մոտ 5600 մարդ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Գանձակ, Կարմիրգյուղ, Գավառ և Նորատուս համայնքներում: Փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները կազմակերպելու նպատակով նշված համայնքներում ստեղծված է 10 կազմավորում 90 մարդ անձնակազմով, 16 բժշկական բրիգադներ 60 մարդ անձնակազմով: Նշված համայնքներում առկա է 26 միավոր ինժեներական տեխնիկա:

ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

24.05.2017թ. ժամը 8^{00}-ին «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի միջնամասում առաջացել է ճեղք: Ճեղքի մեջ նկատվում է ջրի ինտենսիվ ներհոսք:

Ուսումնավարժությունը անցկացվելու է 3 փուլով՝ 2017թ. մայիսի 24-ին ժամը 8^{00}-18^{00}:

Ի ՓՈՒԼ՝ Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման անմիջական սպառնալիքի դեպքում:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ Օպերատիվ ժամանակով - ժամը 8^{00}-13^{00}

Աստղաբաշխական ժամանակով – 24.05.2017թ ժամը 8^{00}-12^{00}

ՄԱՍՆԱԿԻ ԻՐԱՎԻՃԱԿ

Ջրամբարում ջրի մակարդակը մոտ է առավելագույնին: Հետզհետե ճեղքը մեծանում է և սկսվում է ջրի ինտենսիվ արտահոսք, որը հետզետե ավելանում է:Առկա է պատվարի փլուզման վտանգ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Մասնակիցների ազդարարում, հավաք, իրավիճակի գնահատում և խնդրադրում:
2. Ղեկավար մարմինների և ուժերի պատրաստության բերման միջոցառումների իրականացում:
3. Աղետալի ջրածածկման գոտուց բնակչության տարահանման կազմակերպում:

ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24.05.2017թ. ժամը 8:00–ին մարզային փրկարարական վարչության ՃԿԿ կրտսեր հրահանգիչը «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերությունից ստանում է ահազանգ, որ ճեղք է առաջացել «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի միջնամասում և այնտեղ նկատվում է ջրի ներհոսք: ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը՝ համաձայն հրահանգի, Գեղարքունիքի մարզպետի և մարզային փրկարարական վարչության պետի հրամանով իրականացնում է մարզի ԱԻ-ում գործող մշտական հանձնաժողովի և ՄՓՎ անձնակազմի ազդարարում և հավաք, համագործակցելով մարզի կապի և ազդարարման ծառայության հետ: Ստեղծված իրավիճակի և իրականացված գործողությունների մասին ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը պարբերաբար զեկույցներ է նախապատրաստում ուղղված ՀՀ ԱԻՆ ՃԿԱԿ-ին:

- Ժամը 9:00 մարզպետարանի, ՄՓՎ-ի և «Գեղարքունիք» ՋՕԸ-ի համապատասխան մասնագետներից կազմված օպերատիվ խումբը՝ տեղում իրավիճակը ուսումնասիրելու համար մեկնում է «Գեղարքունիք 1» ջրամբար:

- Ժամը 9:30 մարզպետի մոտ հրավիրվում է ԱԻ հանձնաժողովի նիստ, որտեղ օպերատիվ խմբից ստացված տեղեկությունների հիման վրա ներկայացվում է ստեղծված իրավիճակը և ընդունվում է որոշում մարզի արտակարգ իրավիճակներում գործելու պլանը համապատասխան մասով գործի դնելու ու ղեկավար մարմինների, ուժերի և միջոցների պատրաստության բերման միջոցառումների իրականացման վերաբերյալ:
- Ժամը 10:00-ից ծառայություններում սահմանում է շուրջօրյա հերթապահություն: Կազմավորումները հնարավորինս համալրվում են անձնակազմով և հաստիքային գույքով ու տեխնիկայով: Փորձարկվում են ինժեներական տեխնիկաները, տարվում աշխատանքներ հայտնաբերված թերությունների վերացման և դրանց պատրաստականության ապահովման ուղղությամբ: Բուժհիմնակրկներում կատարվում են լրացուցիչ մահճակալների ծավալում և համապատասխան միջոցների ու դեղորայքի կուտակում: Ստեղծվում է ռադիոկապ մարզպետի, ծառայությունների ու կազմավորումների ղեկավարների միջև:
- Ժամը 11:00-ից մարզպետի որոշմամբ կազմակերպվում է աղետալի ջրածածկման գոտուց բնակչության տարահանում: Համապատասխան մասով գործի է դրվում մարզային տարահանման պլանը, ծավալվում են տարահանման հավաքակայաններ, կազմակերպվում է տարահանված բնակչությանը ժամանակավոր կացարաններով ապահովում՝ օգտագործելով նույն համայնքներում առկա աղետալի ջրածածկման գոտուց դուրս գտնող հասարակական շինությունները, բնակարանները: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է վրանային ճամբարների ծավալում: Կազմակերպվում է տուժած բնակչությանը սննդով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովում:
- Ժամը 12:00-13:00-ին ուսումնավարժության մասնակիցները ներկայացնում են I փուլում իրենց գործողությունները, կատարվում է I փուլի արդյունքների ամփոփում:

II ՓՈՒԼ՝ Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման դեպքում

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ Օպերատիվ ժամանակով – 3 օր

Աստղաբաշխական ժամանակով - 24.05.2017թ. ժամը 14^{00}-16^{00}

ՄԱՍՆԱԿԻ ԻՐԱՎԻՃԱԿ

Ճեղքը մեծանում է և սկսվում է ջրի ինտենսիվ արտահոսք, որը հետզհետե ավելանում է: Ժամը 14^{00}-ին ջրամբարի պատվարը չդիմանալով ջրի ճնշմանը փլվում է: Ջրի մեծ ալիքը ավերելով կամուրջներ և շինություններ ջրալցում է Գեղարքունիք, Լանջաղբյուր, Գանձակ, Կարմիրգյուղ, Գավառ և Նորատուս համայնքների գտափնյա շուրջ 300 հա տարածք:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում:
2. Աղետալի ջրածածկման հետևանքով պատճառած վնասների հետևանքների վերացման աշխատանքների իրականացում:

ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ժամը 14^{00}-ից աղետալի ջրածածկման գոտում կատարվում է հետախուզություն: Կազմակերպվում է ջրածածկված գոտում հայտնված բնակչության և ընտանի կենդանիների դուրս բերում, ինչպես նաև գազի, ջրի և էլեկտրաենергիայի կոմինիկացիաներում անհետաձգելի վթարավերականգնողական, ճանապարհների երթևեկելիության ապահովման աշխատանքներ: Կազմակերպվում է ջրի հոսքը ուղղորդող և արգելափակող պատնեշների կառուցում, օգտագործելով ինչպես ինժենարական տեխնիկա այնպես էլ ավազով լցված պարկեր: Կազմակերպվում է տուժածներին բուժօգնության ցուցաբերում, հակահամաճարակային միջոցառումներ:
- Ժամը 15^{00}-ից մարզպետի որոշումով ստեղծվում է հանձնաժողով «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման հետևանքով պատճառած վնասների գնահատման և արձանագրման նպատակով: Հանձնաժողովը ուսումնասիրելով պատճառված վնասը կազմում է արձանագրություն և ներկայացնում մարզպետին: Կազմակերպվում է աղետի հետևանքով վթարված կոմունիկացիաների և համայնքամիջյան երթուղիների ու ճանապարհների վերականգնում:
- Ժամը 16^{00}-16^{45} ուսումնավարժության մասնակիցները ներկայացնում են II փուլում իրենց գործողությունները:

<u>III փուլ</u>՝ Ուսումնավարժության գործնական միջոցառումների իրականացում համաձայն գործնական միջոցառումների իրականացման պլանի:

Աստղաբաշխական ժամանակ՝ 24.05.2017թ. ժամը 17^{00}- 18^{00}

18^{00} հայտարարվում է ուսումնավարժության ավարտ:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017թ. մայիսի 5-ի
N 77-Ա որոշման

ՊԼԱՆ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման դեպքում»

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

1. Կատարելագործել մասնակիցների գործնական ունակությունները ստեղծված իրավիճակում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:
2. Կատարելագործել փոխհամագործակցությունը կառավարման մարմինների միջև:
3. Ստուգել «ՀՀ Գեղարքունիքի մարզի ԱԻ-ում բնակչության պաշտպանության պլան»-ի իրատեսությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆԸ ԸՆԴԳՐԿՎՈՒՄ ԵՆ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմը, ՀՀ Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակների մշտական հանձնաժողովը, ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը, «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերությունը, Գեղարքունիք համայնքի ղեկավար կազմը. Գանձակ համայնքի ղեկավար կազմը, Գավառի աղետների բժշկության թիմը, ՀՀ ոստիկանության Գավառի բաժնի խումբը, գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկրամատակարարման համակարգերի վթարավերականգնողական մեկական խմբեր:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ 2017թ. մայիսի 24-ին ժամը 8^{00}-18^{00}

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Գեղարքունիքի մարզպետարանի խորհրդակցությունների դահլիճ, գործնական միջոցառումների անցկացման տեղամաս

ԺԱՄԸ		ՈՒսումնական հարցեր	Ստեղծվող իրավիճակը	Ուսուցանվողների գործողությունները	ՀՇՈՒ ղեկավարի գործողությունները	Միջնորդների գործողություն ները
Օպեր ատիվ	Աստղ աբաշ.					
1.	2.	3.	4.	5.	6.	7.
Ի ՓՈՒԼ՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման անմիջական սպառնալիքի դեպքում: ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ Օպերատիվ ժամանակով - ժամը 8^{00}-13^{00} Աստղաբաշխական ժամանակով – 24.05.2017թ ժամը 8^{00}-12^{00}						
8^{00}-9^{30}	8^{00}-10^{00}	Մասնակիցների ազդարարում, հավաք, իրավիճակի գնահատում և խնդրադրում:	«Գեղարքունիք1» ջրամբարի պատվարի միջնամասում առաջացել է ճեղք: Ճեղքի մեջ նկատվում է ջրի ինտենսիվ ներհոսք: Այդ պահին ջրամբարում ջրի մակարդակը մոտ է առավելագույնին: Առկա է պատվարի փլուզման վտանգ:	Մարզային փրկարարական վարչության ՃԿԿ կրտսեր հրահանգիչը «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերությունից ստանում է ահազանգ, որ երկրաշարժի հետևանքով ճեղք է առաջացել «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի միջնամասում և այնտեղ նկատվում է ջրի ներհոսք: ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը համաձայն հրահանգի՝ Գեղարքունիքի մարզպետի և մարզային փրկարարական վարչության պետի հրամանով իրականացնում է մարզի ԱԻ-ում գործող մշտական հանձնաժողովի և ՄՓՎ անձնակազմի ազդարարում և հավաք, համագործակցելով մարզի կապի և ազդարարման ծառայության հետ: Ստեղծված իրավիճակի և իրականացված գործողությունների մասին ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը պարբերաբար նախապատրաստում է զեկույցներ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՃԿԱԿ: Մարզպետարանի, ՄՓՎ-ի և	Մարզային փրկարարական վարչության պետին տալիս է համապատասխան մարմինների ղեկավարների հավաքի կազմակերպման հրաման: Հրավիրում է ԱԻ հանձնաժողովի նիստ, անդամներին տեղեկացնում է ստեղծված իրավիճակի մասին: Ընդունում է որոշում մարզի ԱԻ-ում գործելու պլանը համապատասխան մասով գործի դնելու և ղեկավար մարմինների, ուժերի և միջոցների պատրաստության բերման միջոցառումների	Հետևում են անցկացվող միջոցառումներին, մասնակցում են ԱԻ հանձնաժողովի նիստին : Հանձնում են՝ թիվ 1,2,3 միջանկյալները

				«Գեղարքունիք» ՋՕԸ-ի համապատասխան մասնագետներից կազմված օպերատիվ խումբը մեկնում է «Գեղարքունիք 1» ջրամբար՝ տեղում իրավիճակը ուսումնասիրելու համար: Մարզպետի մոտ հրավիրվում է ԱԻ հանձնաժողովի նիստ, որտեղ օպերատիվ խմբից ստացված տեղեկությունների հիման վրա ներկայացվում է ստեղծված իրավիճակը և ստանում են մարզպետի որոշումը մարզի արտակարգ իրավիճակներում գործելու պլանը համապատասխան մասով գործի դնելու և ղեկավար մարմինների, ուժերի և միջոցների պատրաստության բարձրացման միջոցառումների իրականացման վերաբերյալ:	իրականացման վերաբերյալ:	
	8^{00}-9^{00}	Միջանկյալներ թիվ 1,2,3	Իրավիճակը համաձայն թիվ 1,2,3 միջանկյալների	Իրականացնում են միջոցառումներ ըստ միջանկյալների		

10^{00}-13^{00}	10^{00}-11^{00}	Ղեկավար մարմինների և ուժերի պատրաստության բերման միջոցառումների իրականացում:	«Գեղարքունիք1» ջրամբարի պատվարի միջնամասում առաջացած ճեղքում ջրի ներհոսքը ուժեղանում է:	Մարզպետարանի ստորաբաժանումներում սահմանվում է շուրջօրյա հերթապահություն: Արձագանքող ուժերը հնարավորինս համալրվում են անձնակազմով, հաստիքային գույքով ու տեխնիկայով: Փորձարկվում են տրանսպորտային և ինժեներական տեխնիկաները, տարվում աշխատանքներ հայտնաբերված թերությունների վերացման և դրանց պատրաստության ապահովման ուղղությամբ: Բուժհիմնարկներում կատարվում են լրացուցիչ մահճակալների ծավալում և համապատասխան միջոցների ու դեղորայքի կուտակում: Ստեղծվում է ռադիոկապ մարզպետի ղեկավարման կետի և ծառայությունների ու կազմավորումների ղեկավարների միջև: Արձագանքող ուժերը զբաղեցնում են ելակետային դիրքեր	Հետևում է իրականացվող աշխատանքների ընթացքին	Հետևում են անցկացվող միջոցառումներին: Ուշադրություն են դարձնում ՀՇՈ-ի մասնակիցների համաձայնեցված գործողություններին Հանձնում են՝ թիվ 4,5,6,7 միջանկյալները
	10^{00}-10^{30}	Միջանկյալներ թիվ 4,5,6,7	Իրավիճակը համաձայն թիվ 4,5,6,7 միջանկյալների	Իրականացնում են միջոցառումներ ըստ միջանկյալների		

10^{30}-15^{30}	11^{00}-12^{00}	Աղետալի ջրաածծկման գոտուց բնակչության տարահանման կազմակերպում	«Գեղարքունիք1» ջրամբարի պատվարի միջնամասում առաջացած ճեղքում ջրի ներհոսքը ուժեղանում է:	Համապատասխան մասով գործի է դրվում մարզային տարահանման պլանը, ծավալվում են տարահանման հավաքակայաններ, կազմակերպվում են տարահանված բնակչությանը ժամանակավոր կացարաններով ապահովելու գործընթացը օգտագործելով նույն համայնքներում առկա՝ աղետալի ջրաածծկման գոտուց դուրս գտնող, հասարակական շինությունները, բնակարանները:	Ընդունում է որոշում աղետալի ջրաածծկման գոտուց բնակչության տարահանման մասին	Հետևում են անցկացվող միջոցառումներին: ՈՒշադրություն են դարձնում ՀՇՈ մասնակիցների համաձայնեցված գործողություններին Հանձնում են՝ թիվ 8,9,10,11 միջանկյալները
	11^{00}-11^{20}	Միջանկյալներ թիվ 8,9,10,11	Իրավիճակը համաձայն թիվ 8,9,10,11 միջանկյալների	Իրականացնում են միջոցառումներ ըստ միջանկյալների		
	12^{00}-13^{00}	Առաջին փուլի ամփոփում		Ուսումնավարժության մասնակիցները ներկայացնում են I փուլում իրենց գործողությունները, կատարվում է առաջին փուլի ամփոփում:	Ընդունում է համապատասխան զեկույցներ, գնահատում է կատարված աշխատանքները	Ներկայացնում են իրենց դիտարկում ները
	13^{00}-14^{00}	Ը Ն Դ Մ Ի Ջ Ո Ւ Մ				
II ՓՈՒԼ՝ Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ Օպերատիվ ժամանակով – 3 օր Աստղաբաշխական ժամանակով - 24.05.2017թ. ժամը 14^{00}-16^{00}						
12^{00}-21^{00}	14^{00}-15^{00}	Որոնողափրկարարակ ան և անհետաձգելի վթարավերականգնող ական աշխատանքների իրականացում	Ճեղքը մեծանում է և սկսվում է ջրի ինտենսիվ արտահոսք, որը հետզհետե ավելանում է: Ժամը 12^{00}-ին ջրամբարի պատվարը չդիմանալով ջրի ճնշմանը փլվում է: Ջրի մեծ ալիքը	Աղետալի ջրաածծկման գոտում կատարվում է հետախուզություն: Կազմակերպվում է ջրաածծկված գոտում հայտնված բնակչության և ընտանի կենդանիների դուրս բերում, ինչպես նաև գազի, ջրի և էլեկտրաէներգիայի	Ընդունում է որոշում որոնողափրկարարա կան աշխատանքների իրականացման վերաբերյալ: Հսկում է աշխատանքների կատարումը	Հետևում են անցկացվող միջոցառումներին ՈՒշադրություն են դարձնում ՀՇՈ մասնակիցների համաձայնեցված

			ավերելով կամուրջներ և շինություններ ջրալցնում է Գեղարքունիք, Լանջաղբյուր, Գանձակ, Կարմիրգյուղ, Գավառ և Նորատուս համայնքների գտափնյա շուրջ 300 հա տարածք, 1500 տնտեսություն:	կոմունիկացիաներում վթարավերականգնողական, ճանապարհների երթևեկելիության ապահովման աշխատանքներ: Կազմակերպվում է ջրի հոսքը ուղղորդող և արգելափակող պատնեշների կառուցում, օգտագործելով ինչպես ինժենարական տեխնիկա այնպես էլ ավազով լցված պարկեր: Կազմակերպվում են տուժածներին բուժօգնության ցուցաբերում և հակահամաճարակային միջոցառումներ		գործողություններին Հանձնում են՝ թիվ 12,13,14 միջանկյալները
	14^{10}-14^{30}	Միջանկյալներ թիվ 12,13,14	Իրավիճակը համաձայն թիվ 12,13,14 միջանկյալների	Իրականացնում են միջոցառումներ ըստ միջանկյալների		
Մինչև աղետի հետևանքների վերացումը	15^{00}-16^{00}	Աղետալի ջրածածկման հետևանքով պատճառած վնասների հետևանքների վերացման աշխատանքների իրականացում	Ջրի հոսքը դադարել է, ջրամբարում մնացաց ջուրը այլևս իրենից վտագ չի ներկայացնում	Կազմակերպվում է աղետի հետևանքով վթարված շինությունների, կոմունիկացիաների և երթուղիների վերականգնում: Մարզպետի որոշումով ստեղծվում է հանձնաժողովը կազմակերպում է պատճառված վնասի ուսումնասիրման աշխատանքները, կազմում է արձանագրություն և ներկայացնում մարզպետին:	Ընդունում է որոշում «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման հետևանքով պատճառած վնասների գնահատման և արձանագրման հանձնաժողով ստեղծելու մասին: Հսկում է աշխատանքների կատարումը	Հետևում են անցկացվող միջոցառումներին ՈՒշադրություն են դարձնում ՀՇՈ մասնակիցների համաձայնեցված գործողություններին Հանձնում են՝ թիվ 15,16,17,18,19,20,21 միջանկյալները
	15^{00}-15^{40}	Միջանկյալներ թիվ 15,16,17,18,19,20,21	Իրավիճակը համաձայն թիվ 15,16,17,18,19,20,21 միջանկյալների	Իրականացնում են միջոցառումներ ըստ միջանկյալների		
	16^{00}-16^{45}	Երկրորդ փուլի		Ուսումնավարժության մասնակիցները	Ընդունում է	Ներկայացնում են

		ամփոփում		ներկայացնում են II փուլում իրենց գործողությունները	համապատասխան զեկույցներ, գնահատում է կատարված աշխատանքները:	իրենց դիտարկումները
III փուլ՝ Ուսումնավարժության գործնական միջոցառումների իրականացում համաձայն գործնական միջոցառումների իրականացման պլանի: աստղաբաշխական ժամանակ՝ 24.05.2017թ. ժամը 17^{00}- 18^{00}						
	17^{00}-18^{00}	գործնական միջոցառումների իրականացում		գործնական միջոցառումների իրականացում համաձայն գործնական միջոցառումների իրականացման պլանի		
	18^{00}	Ուսումնավարժության ավարտ			Հայտարարում է ուսումնավարժության ավարտ	

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017թ. մայիսի 5 ի
N 77-Ա որոշման

ՊԼԱՆ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Միջանկյալի տրման ժամը	Միջանկյալի բովանդակությունը	Ով է հանձնում	Ում է հանձնում
Ի ՓՈՒԼ՝ Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման անմիջական սպառնալիքի դեպքում: ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ Օպերատիվ ժամանակով - ժամը 8^{00}-13^{00} Աստղաբաշխական ժամանակով – 24.05.2017թ ժամը 8^{00}-12^{00}			
8^{00}	**Միջանկյալ թիվ 1** Երկրաշարժի հետևանքով ճեղք է առաջացել «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի միջնամասում և այնտեղ նկատվում է ջրի ներհոսք:	ՇՈՒ ղեկավարման շտաբի պետ	ՄՓՎ ՃԿԿ կրտսեր դիսպեչերներին
9^{00}	**Միջանկյալ թիվ 2** Անհրաժեշտ է կայուն կապ օպերատիվ խմբի և մարզի ԱԻ հանձնաժողովի հետ	միջնորդ	«Արմենտել» ՓԲԸ Գավառի կենտրոնի տնօրեն
9^{00}	**Միջանկյալ թիվ 3** Դեպի «Գեղարքունիք 1» ջրամբար տանող հիմնական ճանապարհը անցնում է հնարավոր աղետալի ջրածածկման գոտով	միջնորդ	ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
10^{00}	**Միջանկյալ թիվ 4** «Գեղարքունիք 1» ջրամբարից ներքև մոտ 20 հա արոտավայրում արածեցվում են անասուններ	միջնորդ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
10^{10}	**Միջանկյալ թիվ 5** Համայնքներում առկա 2 մղանը, 1 էքսկավատորը և 3 ինքնաթափը գտնվում են անսարք վիճակում	միջնորդ	Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
10^{20}	**Միջանկյալ թիվ 6** Գեղարքունիք համայնքում մոտ 30մ գետի բետոնյա ափապատնեշի հիմքը ամուր չէ	միջնորդ	Քաղաքաշինության վարչության պետ

10^{20}	**Միջանկյալ թիվ 7** Գանձակ համայնքի կամրջի հենասյունները թեքված են	միջնորդ	Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
11^{00}	**Միջանկյալ թիվ 8** Հավանական աղետալի ջրածածկման գոտում կարող է հայտնվել մոտ 1500 տնտեսություն 5600 մարդ բնակչությամբ	միջնորդ	Տարահանման հանձնաժողով
11^{10}	**Միջանկյալ թիվ 9** Գեղարքունիք համայնքում տարահանված է 530 բնակիչ, որոնցից ժամանակավոր կացարաններով ապահովված են 460 մարդ	միջնորդ	Գեղարքունիք համայնքի ղեկավար Տարահանման հանձնաժողով
11^{15}	**Միջանկյալ թիվ 10** Գանձակ համայնքում տարահանված է 576 բնակիչ, որոնցից ժամանակավոր կացարաններով ապահովված են 489 մարդ	միջնորդ	Գանձակ համայնքի ղեկավար Տարահանման հանձնաժողով
11^{20}	**Միջանկյալ թիվ 11** Հավանական ջրածածկման գոտում կհայտնվեն գյուղ կենդանիներ՝ 312 գլուխ խոշոր, 1476 գլուխ մանր եղջերավոր անասուններ	միջնորդ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
II ՓՈՒԼ՝ Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը «Գեղարքունիք 1» ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ Օպերատիվ ժամանակով – 3 օր Աստղաբաշխական ժամանակով - 24.05.2017թ. ժամը 12^{00}-16^{00}			
14^{10}	**Միջանկյալ N 12** Գեղարքունիք համայնքում 3 մարդու մասին տեղեկություններ չկան	միջնորդ	Ոստիկանության մարզային վարչության պետ
14^{20}	**Միջանկյալ N 13** Փրկարարական աշխատանքներում ընդգրկված են 90 մարդ: Անհրաժեշտ է նրանց ապահովել սննդով	միջնորդ	Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչ. պետի տեղեղակալ
14^{30}	**Միջանկյալ 14** Ջրածածկված գոտուց տարահանվել է 107 գլուխ խոշոր և 214 գլուխ մանր եղջերավոր անասուններ	միջնորդ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
15^{00}	**Միջանկյալ 15** Արոտավայրերից վերադարձող անասունները ունեն տեղավորման խնդիր	միջնորդ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
15^{05}	**Միջանկյալ 16** Գեղարքունիք համայնքի ջրածածկված գոտում գրանցվել է ցածր ճնշման գազատարի վթարի դեպք	միջնորդ	Քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների բաժնի վարիչ

15^{10}	**<u>Միջանկյալ 17</u>** Գանձակ համայնքի ջրածածկված գոտում գրանցվել է ջրատար խողովակաշարի վթարի դեպք	միջնորդ	Քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների բաժնի վարիչ
15^{15}	**<u>Միջանկյալ 18</u>** Շրջվել են էլ. հոսանքի հենասյուններ	միջնորդ	«Հայ ԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մանաճյուղի գլխ. ճարտարագետ
15^{20}	**<u>Միջանկյալ 19</u>** Գեղարքունիք համայնքի ջրածածկված գոտում նկատվել է 3 անծանոթ տղամարդուց բաղկացած խումբ, որոնք նավակով շրջում են առանձնատների շրջակայքում	միջնորդ	Ոստիկանության մարզային վարչության պետ
15^{30}	**<u>Միջանկյալ 20</u>** 32 բնակիչ ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ, որից 4-ի վիճակը գնահատվում է միջին ծանրության:	միջնորդ	Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
15^{40}	**<u>Միջանկյալ 21</u>** Բարեգործական կազմակերպություններից ստացվել է մոտ 10 տոննա սնունդ և առաջին անհրաժեշտության պարագաներ	միջնորդ	Ֆինանսական և սոցիալտնտեսական զարգացման վարչ. պետի տեղեկակալ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 6
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017թ. մայիսի 5-ի
N 77-Ա որոշման

ՊԼԱՆ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Ուսումնական նպատակը՝ Կատարելագործել արձագանքող ուժերի գործնական հմտությունները՝ փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու գործում:
Գործնական միջոցառումների անցկացման ժամկետը՝ 2017թ. մայիսի 24 ժամը 17^{00}-18^{00}

Տեղամասի համարը	Անցկացման վայրի (տեղամասի) անվանումը	Գործնական միջոցառման անվանումը	Տևողությունը	Ներգրավվող ուժերն ու միջոցները	Գործնական միջոցառման ղեկավար
1	Ք.Գավառ Գավառագետի ափամերձ տարածք	Ջրհեղեղից տուժած տարածքում ակնադիտական հետախուզության անցկացում	17^{00}-17^{05}	ՄՓՎ Գավառի հրշեջ փրկարարական ջոկատ	փ/ծ փոխգնդապետ Գ. Հակոբյան
2	Ք.Գավառ Գավառագետի ափամերձ տարածք	Փրկարարական աշխատանքների տեղամասերում հասարակական կարգի պահպանության կազմակերպում	17^{10} – 18^{00}	Ոստիկանության Գավառի բաժնի խումբ	ՈստիկանությանԳավառի բաժնի պետ Ա. Քոչարյան
3	Ք.Գավառ Գավառագետի ափամերձ տարածք	Գետանցման ուղու պատրաստում	17^{05} – 17^{20}	ՄՓՎ Գավառի ՀՓՋ, ՄՓՎ ՀՋՋ մեկական մարտական հաշվարկ	փ/ծ մայոր Ա. Բարսեղյան
4	Ք.Գավառ Գավառագետի ափամերձ տարածք	Բժշկականան անձնակազմի տեղափոխում գետի մի ափից մյուսը օդային գետանցման եղանակով	17^{20} – 17^{30}	ՄՓՎ Գավառի ՀՓՋ 1 մարտական հաշվարկ	փ/ծ մայոր Ա. Բարսեղյան

5	Ք.Գավառ Գավառագետի ափամերձ տարածք	3 տուժածներին բժշկական օգնության ցուցաբերում:	17^{30} – 17^{45}	Գավառի տարածաշրջանի աղետների բժշկության խումբ	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության բաժնի վարիչ Վ. Խաչատրյան
6	Ք.Գավառ Գավառագետի ափամերձ տարածք	Բժշկական տեսակավորման կետի ծավալում, 1 տուժածի տեղափոխում ստացիոնար բուժհաստատություն:	17^{20} – 17^{55}	Գավառի տարածաշրջանի աղետների բժշկության խումբ	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության բաժնի վարիչ Վ. Խաչատրյան
7	Ք.Գավառ Գավառագետի ափամերձ տարածք	Տուժածների տեղափոխում գետի մի ափից մյուսը օդային գետանցման եղանակով	17^{40} – 18^{00}	ՄՓՎ Գավառի ՀՓՋ,	փ/ծ մայոր Ա. Բարսեղյան
8	Ք.Գավառ Գավառագետի ափամերձ տարածք	Վնասված միջին ճնշման գազատարի վերականգնում	17^{30} – 17^{50}	Գավառի ԳԳՄ 1 վթարավերականգնողական խումբ	Քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների բաժնի վարիչ Հ. Բիձյան
9	Ք.Գավառ Գավառագետի ափամերձ տարածք	Վնասված էլ. Սյուների և էլ. Լարերի վերականգնում	17^{30}– 17^{50}	Գավառի էլ. ցանցի 1 վթարավերականգնողական խումբ	Գավառի էլ. Ցանցի տնօրեն Ա. Սինանյան
10	Ք.Գավառ Գավառագետի ափամերձ տարածք	Վնասված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վերականգնում	17^{30} – 17^{50}	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Գավառի տեղամասի վթարավերականգնողական խումբ	Քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների բաժնի վարիչ Հ. Բիձյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017թ. մայիսի 5-ի
N 77-Ա որոշման

ՍԽԵՄԱ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ